

Դեկտեմբեր 14, 1977

Մեծայարգ  
Տիար Եղուարդ Մանուշակեան  
նիւ Եորք,

Յարգելի Տիար Մանուշակեան,

Առաջնորդարանի Խնամակար Մարմինը ստացած է 500 տո-  
լարի ձեր սրտաբուխ նուիրատուութիւնը, որուն համար կը  
յայտնէ իր խորին շնորհակալութիւնը:

Մեծապէս կը գնահատենք Առաջնորդարանի հանդէպ ձեր  
ցոյց տուած հետաքրքրութիւնը եւ կատարած նուիրատուու-  
թիւնը:

Մեր համայնքի քարոզութեան համար Խնամատար Մարմնի  
առաջադրած խիստ կենսական ծրագիրները կարելի է իրակա-  
նացնել միայն ձեր նման անձերու յանձն առած զոհողու-  
թիւններով եւ առատաձեռն նուիրատուութիւններով:

Այս առթիւ Խնամատար Մարմինը կը հրաւիրէ ձեզ անդա-  
մակցելու իր կազմին եւ աշխատեցրու անոր հետ՝ առաջադրու-  
ած ծրագիրներու իրագործման համար: Ուրախ պիտի ըլլանք  
եթէ ստանանք ձեր դրական պատասխանը:

Կ'օրհնենք ձեզ եւ մեր Տիրոջմէ կը խնդրենք որ իր  
հովանին անպակաս ընէ ձեր եւ ձեր սիրելիներուն վրայէն,  
եւ ձեր պարգեւէ քաջատողջութիւն եւ երկար կեանք:

Աղօթարար՝

Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեան  
Առաջնորդի Փոխանորդ

Յ.Գ. Հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանի ստացականը: